

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար	
Տարեկան	12 Ձր.
Վեցամսյայ	6 »
Արևասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսյայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ար.
Վեցամսյայ	1.50 »
ՎԱՆՈՒԿՆԻ ՎՃՐՆԵԼԻ	

Վանուցման տոյր առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին տեղի անխափան համար 20 Ու՛ գնդը կըլլայ:

Պաշտարանի համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախակ եւ դրամ դրկեղ
Խմբագրութեանն հասցեիկ

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կրթութեանն եւ յեւ տոյր

Արևասահմանի համար ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)

ՆԻՍՏ ԺԶ.

Հոգաբարձութիւնն նկատելով որ Ազգային երկսեռ վարժարանաց հաստիքները կը կազմեն Պատ. Թաղական Խորհրդոյ կողմանէ արուած նպաստը եւ երկսեռ աշակերտաց ամսաթոշակները:

Նկատելով որ Պատ. Թաղական Խորհուրդը ամէն ամիս կանոնաւորապէս կը վճարէ Հոգաբարձութեանս իր որոշեալ գումարը:

Նկատելով որ երկսեռ վարժարանք յարատեւ կանոնաւոր ընթացք մը ունենալու համար հարկ է ամէն ամիս պաշտօնէից ամսաթոշակը կանոնաւորապէս վճարել:

Որոշեց. Որ այն ամէն ծնողք որոնց զաւակները թոշակաւ ընդունուած են ի վարժարանս, պարտին իրենց ամսաթոշակը վճարել ամէն ամսոյ մինչեւ հինգերորդ օրը. հակառակ պարագային Հոգաբարձութիւնն պիտի ստիպուի ճամբել այդ կարգի աշակերտները:

Հետեւաբար մեր այս որոշում կը հաղորդեմք յարգու ծնողքի զիտութիւն:

Ի գիտաց Հոգաբարձութեան Ազգային երկսեռ վարժարանաց Վ. Ատենադպրի Ատենապետ Գ. Կիւլպիսեւեան Յ. Մ. Թովմասեան Վառնա, 2 Հոկտեմբեր

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Կովկասի հայութիւնը դիակնանցել է: հայկական կեանքի զարկերը այլեւս չեն նկատուում: Ինչո՞ւ այս արագ փոփոխութիւնը հարցնում է նորեկը և կովկասցիներին լաւ ճանաչող հայը. չէ որ այստեղ տաճկական գաղանթութիւնները չը կան...

Ինչո՞ւ այսպէս մեռած են ամենքը, առանց սեռի և հասակի խտրութեան:

Այո, կովկասում տաճկական գաղանթութիւններ չը կան. սրով չեն կոտորում, կալածքները չեն հրգեհում, ինչքերը չեն յափըռտակում, որովհետեւ ուսը, որի արեան մէջ մօնօրյական արեան մի ահագին տոկոս կայ, այլեւս տաճկի շափ վայրենի չէ, իր հպատակ հայերին սրով չէ ջըն-

ջում, այլ նրանց հոգին, միտքը և սիրան է մեռցնում՝ կործանելով հայկական այն բոլոր հիմնարկութիւնները որոնցով հայը կարող է զարգացնել և ուժեղացնել իր գիմագրական ուժը:

Ռուս և թուրք համաձայնութեան են յանգել հային շնչել—սրով և քաղաքական միջոցներով. ուսը սրում է տաճկի սուրը, իսկ ինքը բռն լի փայտէ գանակով կամաց կամաց է մեռցնում, ջնջում...

Անողորմ ի և ահարկու են այն պայմանները, որոնց մէջ ապրում է ներկայ կովկասի հայութիւնը. այնքան ահարկու որ ամենատոկուն և կորովի կովկասցին շարել մնացել է, իսկ ամբողջ կատարեալ ինքնակորոյս վիճակի մէջ է գտնվում, ուր է կերպով դիմագրելու ուժ չէ զգում իր մէջ և իրեն յանձնել է ճակատագրին...

Ռուսը լաւ տեսնելով հայի այդ շարած և ինքնակորոյս վիճակը, հարւած հարւած ի տեսից է հասցընում, որպէս զի հայը աչք բանալու, սթափվելու և իր գոյութիւնը պահպանելու միջոցներ որոնելու հնար և ժամանակ չունենայ:

Բայց մի թէ իսկապէս Ռուսահայը ոչ մի միջոց ունի ազգային գոյութեան գործին ուժգին զարկ տալու: Մի թէ իրեն ընդունակ էր զգում միմիայն դպրոցներով եկեղեցիով և գրականութեամբ պահպանել իր գոյութիւնը. և երբ այսօր այդ բոլորը ոչնչանում են ուսական բարբարոս ձեռքերով, նա հլու ոչխարի նման պէտք է դիմանայ Ռուսական կնուտի ամօթաբեր հարւածներին...

Ճշմարիտ, ասած մենք կարծում էինք թէ Ռուսական այդ հարւածները և իրենց դրական օգուտները պէտք է ունենան ամբողջ հայութեան ազատագրութեան գործի համար:

Մտրակված ուսահայը աւելի լաւ պէտք է ըմբռնէր տաճկահայի անտանելի վիճակը և ամբողջովին փախէր նրա ազատութեան գործին:

Մինչեւ այսօր մեր սղափազութեան գործի ահագին ծանրութիւնը բեռնված է տաճկահայի վրա—որը ուսահայերի տուած բուրդիները շափ մարդկային զոհեր է տուել. կովկասցին մեծ մաւաճք բաւականացել է դրամ շարժել այդ գործի համար, և այն էլ իր ունեցած հարսութեանը համեմատ շատ շնչին քանակութեամբ:

Այսօր ուսահայը այլեւս հայկական ոչ մի հիմնարկութիւն ունի, որոնք իր նէրտերի և դրամական օգնութեան պէտքը ունենային: Նա անկարող է իր դրամը կովկասի մէջ գործածել ու է ազգային գործի համար: Ուրեմն ի՞նչ է մնում անել ուսահային եթէ նա ներկայումս մի անբարոյականացած հասարակութիւն չէ և ամենարուսն ատելութիւն է զգում դէպի իրեն ճնշող, կամաց կամաց մահացնող ուսը: Միայն մի բան. այն է ամեն զոհողութիւն յանձն առնել և ամենալայն շափերով աշակցել տաճկահային որ իր թոյլ ուսերի վրա է կրում ամբողջ հայութեան ազատագրութեան գործը և նրա անտանելի ծանրութեան տակ արիւնքամ է լինում...

Բայց գծախտաբար մենք դրա հակառակն ենք տեսնում. ուսահայ մտաւորապէս և նիւթապէս կարող դասակարգը—ի թիւս որոնց և յեղափոխական բոլոր կուսակցութիւններին պատկանողները, մի տեսակ անբարոյական թմրութեան մէջ են ընկել և տաճկահային չեն հասցնում նոյնիսկ այն շնչին օգնութիւնը, որ սրանից մի քանի տարի առաջ հասցնում էին:

Վանից, էրզրումից, Մուշից, Բասէնից, Կիլիկիայից մորթվող հայութեան մնացորդները, յեղափոխական տարրը, ժողովուրդը—այերսայի նամակներով—զէնք, դրամ, անձնազոհ ընկերներ են պահանջում, իսկ ուսի կնուտից գողացող կովկասահայ ինտելիգէնտ յեղափոխականը իր շուքից վախճալով արձագանք չէ տալիս աներեւակայելի տանջանքների առջեւ. անյողողող

կանգնած տաճկահայ եղբոր արգարացի ճիշին...

Ամաչեցէք պարոններ... շատ յոյսեր, տաք տաք խօսքեր էք տուել երկրում տանջվող ժողովրդին. ժամանակ է և պատիւ ճանաչել, խիղճ ունենալ: Ի՞նչու ճաճկաստանում ապրող հայից կարելի է ատրճանակով դրամ ստանալ յեղափոխութեան համար, իսկ ուսահայից ոչ: Թողէք ձեր Դիպլոմատիքական զառանցանքները՝ գործադրեցէք նոյն միջոցները և այդտեղ, ինչ միջոցներ որ գործ էք դնում ճաճկաստանում: Ի՞նչ, կախաղանից, աքսորից և բանտից էք վախենում, ու այդ վախը ծածկում էք սոփեստութիւններով...

Վառնա, 3 Հոկտեմբեր

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԲԱՐԻՉԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Ներկայ համաշխարհային ցուցահանգէսի առթիւ Բարիքի մէջ տեղի ունեցան բազմաթիւ համաժողովներ, որոնց անունները տալը մի առ մի աւելորդ է այս տեղ, և արդէն «Շարժում» հաղորդեց այն համաժողովներու անունները որոնք կը հետաքրքրէին մեզ և որոնց մասնակցած էին նաեւ հայեր: Իսկ այս վերջին շաբթուս տեղի ունեցան Ընկերվարական, խաղաղութեան և այլ համաժողովներ, որոնց մէջ հայկական խընդիրը յուզուեցաւ: Ճիշդ հինգ տեղ (այսինքն հինգ ժողովներու մէջ) հայկական հարցը սեղանի վրայ դրուեցաւ և համակրական ցոյցերու մէջ ի նպաստ մեզ որոշումներ տրուեցան: Թերեւս ուրիշ անգամ առանձին կերպով դրեմ այդ ժողովներու իւրաքանչիւրին մէջ հայոց մասին խօսուածները. այսօր պիտի նկարագրեմ միայն խաղաղութեան համաժողովին մէջ լսածներս:

Պէտք է նախ խոստովանիմ թէ, հայկական հարցին այսպէս պաշտօնական հանդամանք ստանա-

լուն համար միակ աշխատողը եղած է Տեար Հ. Առաքելեան, որ Պարսկաստանի խորհրդէն եկած է հոս մի միայն այս բանին յաջողութեան համար:

Հոկտեմբեր 4ին, հինգշաբթի օրն էր, Հ. Առաքելեան ներկայացուց Համաժողովին ամփոփ Յիշատակարան մը, զոր ստորագրած էին Տեարք Նովիբով, Ռոպէրթի, Քալալէվսի, Լէօն Մարիլիէ, Պրոֆ. Ղամբարով, Հ. Առաքելեան, Մինաս-Չերաղ, Կարապետ Բասմաճեան, Տօրթ. Լօրիս-Մելիքով, Յ. Սաղաթիէլ, Մ. Յովհաննէսեան և ուրիշ հայեր ու օտարներ, որոնք արդէն անդամակցած էին Համաժողովին: Ունկնդիրներու յատուկ նստարաններու վրայ կը տեսնուէին բազմաթիւ հայեր:

Յիշատակարանը տոորադրողները կառարկէին թէ Այ-Սթեֆանօի 16րդ և ապա Պերլինի 61րդ յօդուածներով Եւրոպայի մեծ պետութիւնները «միջազգային» հանգամանք տուած են արդէն հայկական խնդրին, ուստի ամէն իրաւունք ունին իրենց բողոքը ներկայացնել Խաղաղութեան ներկայ Համաժողովին, մանաւանդ որ 1894ին Սասունի ջարդովը նորէն մէջտեղ ելած է հայկական խնդիրը, որ միշտ կը սպառնայ Եւրոպայի խաղաղութեան վրայ, ու յետոյ ինքը Սուլթանն իսկ ստորագրած է վեց պետութեանց ներկայացուցած մայիսի 11 ծրագիրը:

Պ. Նովիբով այս Յիշատակարանին ընթերցումէն ետքը ներկայ ժողովականներուն վրայ բարոյական պարտք գրաւ աշակցել հայկական հարցին կարգադրութեան համար ինպաստ հայոց և ըսաւ. «մենք այստեղ ոչ զէնք ունինք և ոչ թնդանօթ» զօրաւոր կերպով ճնշում բանեցնելու համար Եւրոպական կառավարութիւններուն վրայ, այլ գուք, ո՛վ ներկաներ, գուք պիտի աշխատիք ձեր գրչովը, ձեր բա-

րոյական ազդեցութեամբը, ձեր քարոզներովը և ամէն հնարաւոր միջոցներովը ստիպել ձեր կառավարութիւնները, որպէս զի վերջ մը տան այն բարբարոսութեանց որոնք տեղի կունենան ոչ միայն Հայաստանի մէջ այլ և նոյն իսկ Եւրոպական դեպքաներու աչաց առջեւ. Կ. Պոլսոյ մէջ:» Որոտընդոսա ծափահարութիւններով ուղունուեցան այս խօսքերը: Յետոյ Պ. Նովիբով Խաղաղութեան Համաժողովին մասնախմբին կողմէ ներկայացուց հետեւեալ որոշումն. իբր կըրականացնեն հայոց կողմէ ներկայացուած Յիշատակարանին:

«Համաժողովը՝ քննելով հայաստանի մասին ներկայացուած Յիշատակարանը, իր համակրութիւնը կը յայտնէ այս լիցուած ազգին և այն կարծիքէն է թէ՛ հայկական ջարդերը կը կազմեն այս վերջին ժամանակներս տեղի ունեցած ծանօթ արարքներու ամենէն պզոցիւնը, և սա որոշումը կուտայ թէ՛ թուրք կառավարութիւնը պարտաւոր է յարգել հայոց անկորնչելի իրաւունքները, տպահովուած Պերլինի դաշնագրութեամբ:»

Ասոր վրայ վիճարանութիւն մը բացուեցաւ, որմէ տեսնուեցաւ որ ամէնքն ալ համակրութիւն հայոց: Վիճարանութեան միջոցին խօսեցան Տեարք Ռոպէրթի, Լէօն Մարիլիէ, Ահմէտ Ռիզա, Միքայէլ Յովհաննէսեան և այլք: Ռոպէրթի շառաւղարկեց հետեւեալ յայտարարութիւնը:

Համաժողովը ցաւ կը յայտնէ որ իւրաքանչիւր պետութեան անհամաձայնութիւնը, նախանձը և մասնաւոր շահերու անձուկ յղացումը մինչեւ այսօր արգելք եղած են Այ-Սթեֆանօի և Պերլինի դաշնագրութիւններն ստորագրող կառավարութեանց՝ լրացնել իրենց «մենաճիշդ պարտականութիւնները հանդէպ ժողովրդեան մը զոր բացայայտ խոստումներ—ունենալով ատենական

անժխտելի հանգամանք մը—պարտք կը գնէին այդ կառավարութեանց վրայ պաշտպանել:

«Համաժողովը միեւնոյն ժամանակ կը յուսայ թէ տեղեկական խղճմտանքի զայրոյթը և քաղաքակիրթ աշխարհի ցասումը պիտի վերջանայ պարտք գնելով Եւրոպական կառավարութեանց վրայ բանաւոր և արմատական լուծում մը հայկական խնդրոյն:» Լէօն Մարիլիէ ըսաւ թէ անօգուտ է բարենորոգումներ պահանջել Բ. Իսթէն. վասն զի անիկայ միայն այն ժամանակ պիտի ուզէ դործագրել երբ արդէն հայ մը իսկ չմնայ Հայաստանի մէջ: Ուստի պէտք է որ Եւրոպայի պետութիւններն առանց ժամանակ կորսնցնելու այժմէն իսկ գործագրել տան պէտք եղած բարենորոգումերը: (*)

Ահմէտ Ռիզա առարկեց թէ Այ-Սթեֆանօի դաշնագրութիւնը շնչուած է Պերլինի 61րդ յօդուածով, թէ այս վերջինը իրագործելու համար հայերը երբէք մեծամասնութիւն մը չեն կազմեր ու է մէկ գաւառին մէջ. հետեւորար հարկ չի կայ միայն հայոց համար բարենորոգում պահանջել այլ երկրին մէջ հաւասար չափով ներուած բոլոր թուրքերուն համար, ուով հայերն ալ հանգիստ կրնան ըլլալ:

Ահմէտ Ռիզայի առարկութիւնը սուլունեցաւ ունկնդրաց նստարաններէն և գոգոհութեանց տեղի տուաւ: Ժողովին ատենապետը և Լէօն Մարիլիէ պատասխանեցին թէ թուրքերուն խնդիրը՝

(*) Ժողովի մասնակցող Եւրոպացւոց այդ բանաստեղծական որոշումները իրանց անշուշտ մի բարոյական բաւականութիւն տւին, բայց այդ ժողովին մասնակցող հայերն էլ չը մտածեցին արդեօք թէ նախ քան այդ տեսակ ժողովների վազիր, իրանք աւելի զրական գործեր ունէին կատարելու, որոնց մէջ մեծ մասամբ թերացել են:

կառավարական ներքին խնդիր մըն է, մինչդեռ հայոց խնդիրը՝ միջազգային խնդիր է: Արդ համաժողովը իրաւունք չունի ու է կառավարութեան ներքին խնդիրներուն խառնուելու: Այս իմաստով պատասխան մը տուաւ նաեւ մեր հայրենակից Միքայէլ Յովհաննէսեանը:

Վիճարանութիւններէն յետոյ քուէի դրուելով բոլոր առաջարկները, միաձայնութեամբ ընդունուեցաւ մասնախմբին կողմէ ներկայացուած որոշումը:

Վիճարանութեան միջոցին յուզուեցաւ նաեւ խնդիր մը թէ պէտք է արդեօք պնդել թէ պետութիւնները յանձն առնեն հայկական բարենորոգումներու մէջ մտցնել այնպիսի ձեւ մը որ կրէտէի մէջ գործագրուածին մօտ բան մը ըլլայ: Բայց այս կէտը քուէի դրուելով մերժուեցաւ ձայներու առաւելութեամբ և Ահմէտ Ռիզայի հակառակութեամբ:

Թղթակցութիւնս չի փակած պէ՛ք է աւելցնեմ թէ Համաժողովի անդամներուն ի պատիւ տրուած հացկերոյթի մը մէջ նշանաւոր հայասէր Տիկին Սեփաին յուզիչ բաժակաճառ մը արտասանեց Հայաստանի մէջ նահատակուող հայերու համար: Ինքկայ վեց հայերն անմիջապէս մօտենալով այս վեհասիրտ տիկնոջ՝ ձեռքերը համբուրեցին ի նշան երախտագիտութեան և ի դիմաց հայոց:

Ս. Բարիկ, 24 Սեպտեմբեր

ԼԵՒՈՆ ԼՈՒՍՆԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Խնդրեմ, յառաջիկայ թերթում հրատարակել հաճիք հետեւեալ երկտողը յանուն արգարութեան:

Վահէ Հայկազնեան, Երբեմն Վահէ Ծավարչունի՝ որ գործուած էր Հնչակ կուսակցութեան մէջ՝ նենգութեամբ սպանուեցաւ ապրիլ 27ին Թ. քաղաքում:

ազդուած էր Վարդգէսի գեղեցիկ դէմքէն, այնպէս որ իրենց նայուածքները շուտով զարնուեցան իբրարու, հասկցան զիբար, և իրենց լոկի հովուերգութիւնը փութով մտասիրակարութեան կրակոտ և եռանդուն շրջանին մէջ:

Վարդգէս և Սաթենիկ միեւնոյն յարկին տակ բնակելով ամէն գիւրութիւն ունէին միշտ զերար տեսնելու, և որովհետեւ Աղաւնի հանրմ Սաթենիկի մայրը կատարեալ վստահութիւն ունէր Վարդգէսի վրայ, և զանի իբր զատակ մը կր սիրէր, առանց կասկածի, առանց ո՛րեք վախ մը թող տուաւ որ այդ երկու մատղաջ սիրտերը ժամերով նստին առանձին գլուխ գլխի:

Սակայն Վարդգէս այդ վստահութիւնը երբեք չարաչար չի գործածեց, երբ տեսաւ որ Սաթենիկ իր մարմնական անստգիտ գեղեցկութեան հետ կը միացնէր նաև հոգիի ամբիժ մարտութիւն մը, և բաւականին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (9)

ԽԱՒԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գ. (Շար.)

Վարդգէսի սիրտը մինչեւ այդ տարիքը փակ մնացած էր Դպրոցին մէջ ու դպրոցէն դուրս իր բոլոր ուշադրութիւնը կեդրոնացուցած ըլլալով ուսման վրայ, և երբեք մարմնական վայելքներու վրայ անդրադարձած չըլլալով իր մէջ բոլորովին խուլ մնացած էին սեռային բնազդները:

Վարդգէս գեղեցկին սիրահար էր. սակայն իր այդ պահանջը գոհացնելու համար կը բաւականանար ազուոր էջ մը կարգալով և կամ գեղեցիկ նկարի մը նրբութիւնները գիտելով ժամերով, և իր հոգին կանգիտա-

նար բոլոր այն խռովքները, բոլոր այն յուզումները, որ գրուած տաղերէ գծուած երանգներէ տարբեր աղուորութիւններ կարծնցնեն մարդուս ներքը, ինք մինչև այդ օրը նայած էր ազուոր կնկան մը, կամ աղջկան մը, ինչպէս կը նայէր սիրուն պատկերի մը, առանց ներքին ունէ խլրտում, ու է գրգիռ մը զգալու:

Սակայն Սաթենիկ բոլորովին տարբեր ազդեցութիւն մը կընէր իր վրայ, անոր դիւթական տեսքը կը լեցունէր զինքը այնպիսի հմայքով մը որ մոռցնէր կրտսար իրեն իր վիճակին ամբողջ տառապանքը, անոր նայուածքին տակ կը լուծուէին իր հոգիին խորը կուտակուած բոլոր սեռութիւնները:

Վարդգէս առաջները վեհերոտ ու զգուշաւոր, գողունի նայուածքներ միայն կը նետէր Սաթենիկի վրայ, բայց երթալով սկսաւ աւելի երկար գիտել զանի, իր աչքերը յամառաբար կը պատցնէր անոր վրայ, անչափա-

բար ծծելով Սաթենիկէն արտացոլուած զգլխիչ անուշութիւնները:

Վարդգէս ալ չէր կարող թաժնուիլ պատուհանէն, քանի որ հոն գուրբը նստած էր Սաթենիկ, անտեսանելի ուժ մը զանի շարունակ հոն կը ձգէր, ու տարօրինակ ցաւ մը, անհանգստութիւն մը կը զգար երբ հոն չէր Սաթենիկ:

Վարդգէս շուտով գիտակից եղաւ իր մէջ կատարուած փոփոխութեան, պզտիկ վերլուծում մը իր զգացումներուն համոզիչ զինքը որ սիրահարուած էր Սաթենիկին, այ՛ն, կը սիրէր զանի իր բոլոր հոգիներ իր բոլոր ուժովը: Սէրը ինքնաբերաբար, և անզգալի կերպով ծլած էր իր մէջ ու աճած: Սաթենիկի էութիւնը կաթիլ կաթիլ ցողուած էր իր մէջ, ու անոր անուշիկ պատկերը իր հոգիին խորը քանդակուած էր:

Սաթենիկ ալ անտարբեր չէր Վարդգէսի զգացումներուն, ան ալ իր նորազարթ տարիքին մէջ, առջի օրէն

Այդ սպանութեան գաղտնիքը որքան մոխրեալ և անորոշ նոյնքան անպատշաճ լինելով մեծնող յեղափոխականի պատուին, նրա յիշատակին, յանուն արդար նախանձախնդրութեան ցանկալի է հասկնալ թէ արդեօք ի՞նչ յանցանքի փոխարէն երբեմն յեղափոխական գործիչի դեր ստանձնող անձնուէր երիտասարդի մը սեղորի կենթարկէ կուսակցութիւն մը եւ այն ալ առանց մէկ հարցաքննութեան, եւ կամ մէկ նախանձոտ դաւաճան յեղափոխական ընկեր մը գաղտագողի կը սպաննէ իր ընկերին :

Սոյն երկտողը ազնիւ կոչ մըն է բոլոր հայ յեղափոխական կուսակցութիւններէ որպէս զի անմիջապէս հաճին քննել այս ոճի գաղտնիքը համեմատելով թ. քաղաքում, որով միայն կը յուսամ թէ վերջ գտնեն յեղափոխականի պատուի արատ բերող նենգաւոր սպանութիւնները եւ կամ թիւրիմաց ենթադրութիւնները :

ՄԱՅՐ-ԱՐԱՅ

Թիֆլիս, 1 Սեպտ. 1900
Կուսակցական օրգաններէն կը խնդրուի հրատարակել այս նամակը :
Նոյն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ր Ե Ր

Տ. — քաղաքէն կը գրեն մեզ : «Այս օրերս անձանթ քահանայ մը եկաւ հոս՝ Պոլսի մեկնելու համար. բայց կառավարութիւնը անցագիր չի տալուն՝ 25 օրէ ի վեր հոս կը թափառի իր երկու զաւակներով : Ինչեւէ քահանան տեղւոյս ազգայիններու մէջ տիրող անհամաձայնութիւնն ու երկպառակութիւնները տեղեկանալով, եկեղեցւոյն մէջ գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ, ցցուց թէ ինչպէս յաճախ այդ կարգի վէճերէն տուժող միշտ հայ մանկատին, և հետեւաբար ազգը կը լայն Ըստ թէ այս ճամբան շարունակելով անգուղը պիտի գլտորինք և եզրպատուեն ելող ժողովուրդին պէս անապատներու մէջ պիտի փձանանք : Շիտակը :

զարմացայ այդ եռանդոտ քահանային այս համարձակութեան վրայ, Օրմանեանի հպատակներուն մէջ այսքան ազնիւ ու մաքուր սիրտ ունեցող քահանաներ կը գտնուին եղբր տակալին :

Թէեւ պատրիարքարանը քանիցս դիմումը բրած է իր վիճակի մասին կարգադրութիւն մը խնդրելով, բայց Օրմանեան և ոչ իսկ պատասխան տալ բարեհաճած է :

Ասկէ ամիս մը առաջ, կը գրէ նոյն թղթակիցը, «մէարիֆի տաճիկ քննիչը ոչ միւս լիւման վարժարանները քննելու համար այցելութեան ելաւ : Հայոց վարժարանին մէջ աշխարհագրութեան դասի մը ներկայ գտնուելով, ստաւ աշակերտ մը հարցափորձել :

— Կ. Պոլսոյ մէջ ո՞վ կ'ըլլայ, հարցուց քննիչը : — Ձեր Սուլթանը : — Ձեր թագաւորը ո՞րն է, զատ է : — Մենք չունինք պատասխանեց տղան, մենք ձեր ձեռքը գերի ենք :

Այս կարգի խել մը հարցումներէ ետք. — «Օղլում, պու շէյլէրի սիղէ էօյրէտէն պու հօճա՞ մը ալըր» կը հարցնէ այս սիրուն տղուն : Աղա, հոգաբարձու իրար կանցնին և հազարումէկ խօսքերով հաղիւ կը համուզեն քննիչը որ իր կասկածը փարատէ : Դեռ չենք գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ վերջը, բայց արդէն կը սպասենք մեծ փորձանքի մը :

Սօֆիայի վարժուհին դարձեալ նամակով մը կը ջանայ ինքզինքը արդարացնել : Թաղ. խորհրդին գրութեան ի պատասխան կըսէ թէ իր գանդատները նպատակաւոր չեն եղած երբէք և ինք երբէք կրկին պաշտօնավարելու դիտում չէ ունեցած, եւ թէ թաղ. խորհուրդը վարժուհիին հաշիւներէն տեղեկութիւն ունենալուն, ըստ իրեն, այլեւս նախկին թաղակա-

նութեան համարատուութեան սպասելու հարկ չի կար :

Ինչ ալ ըլլան վարժուհիին գանդատները, սա ճշմարտ է թէ թաղ. խորհրդը չէր կրնար վարժուհիին հաշիւները կազարել առանց իր նախորդին գործառնութեան համարատուութիւնը ստանալու : Յանցանքը կը ծանրանայ նախորդ թաղակախութեան որ բացարձակօրէն անփոյթ գտնուած է վարժուհիի մը ամսավճարը հայթայթելու և խայտառակ դատերու տեղի տրուած է : Աեւ ի լաւ էր որ համաձայնութեամբ մը կ'արգարէր խնդրը և մինչեւ դատարանները չելլար :

ՊՈՒՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մեշկիտի վերջին թիւէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները :

Անձնական գանձուն նախարար Յովհաննէս էֆ. Սազըզ հրատարական տուած է. ասիկա պարկեշտ մարդ մըն է, մանաւանդ այն պաշտօնին համար որուն կոչուած էր : Ինքզինքն անկարող կը յայտարարէ վարելու պաշտօնատուն մը որուն պաշտօնեաները անուագն մէկ տարուան թուշակ առնելիք ունին :


Օսմ. պանթաէն փոխ առնուած 600,000 Օսմ. ոսկին շուտով հատաւ : Սուլթանը ուրիշ փոխառութիւն մըն ալ կուզէ ընել պանթաէն 500,000 ոսկիի : Պանթան կը յայտարարէ թէ միայն 100,000 ոսկի կրնայ տալ : Ահմէտ ձէլալէտտին փաշա եւրոպայէ դարձին բոլորովին երեսէ ինկաւ : Սուլթանը ապուշ նկատեր է զայն, վասն զի չէր յաջողած ոչ մէկ թուրք կամ քրիստոնեայ ետ դարձնել :

Փաշան պատասխաներ է. «հաշտարարութեան գործ կը յանձնուի ինծի ու երբ ես կաշխատիմ ասիկայ ի գլուխ հանել, ասիկին կաքորուին կամ անյայտ կըլլան այնպիսի մարդիկ որոնք ամենափայլուն խոստումներու վրայ ետ դարձած էին : Ասկից քնականարար կը հետեւի թէ շատ գէշ կերպով կընդունուիմ այն անձանց կողմէ որոնց կը դիմեմ, եւ բան մըն ալ չեմ կրնար ընել» : Ըէ-

լալէտտին փաշա տուաւ իր հրատարականը, զոր Սուլթանը մերժեց : Ահմէտ ետ չառնել հրատարականը եւ կը յայտարարէ թէ կուզէ հեռանալ երկրէն՝ անոր վճռական կործանումէն առաջ, ու չի մնալ այսօրինակ կառավարութեան մը ներքեւ :

Ընդհանուր ներուժը խայծ մըն էր լոկ, Սուլթանը իր շուրջը գտնուած սրիկաներուն միայն կ'անջ կախէ : Այս օրերս շատ հայեր ու թուրքեր ձերբակալուեցան : Ի՞նչ պիտի ըլլան անոնք, հետեւեալ պարագաները ցոյց կուտան :

Սուլթանը վերջերս տասնը հինգ հոգի գատեց առաւ գաղտնի ոստիկանութեան ցործակալներուն մէջէն, ամէնքն ալ վաղեմի չարագործներ, որոնց յանձնուեցաւ մասնաւորապէս պալատին կողմէ նշանակուած անձերուն ձերբակալութիւնները : Շոգեմակոյ մը գիշեր ցորեկ այս ընտրեալ խմբակին տրամադրութեան ներքեւ կը գտնուի : Երբ այս մարդիկը ցորեկ ատեն ձերբակալութիւններ կատարեն, ձերբակալուածները կը թխեն Վոյվոտայի պահականցը կամ նոյնիսկ ոստիկանատան պաշտօնատան մէջ : Երբ գիշեր ըլլայ, կանոնն այդ խեղճերը եւ շոգեմակոյ կառավարները, բսելով անոնց թէ պիտի փոխադրուին այն նաւը որ զիրենք պիտի տանի իրենց աքսորավայրը : Այն ատեն, շոգեմակոյը Մարմարայի ճամբան կը բռնէ եւ երբ Գուլֆարուի եւ Սամթիոյ քաղաքը հասնի, ձերբակալուածները ծովահեղձ կըլլան : Սուլթանը ալ երեսէ ձգած է Վոսիտը, որուն հոսանքները երբեմն մինչեւ ծովեզր կը քնն դիակները : Սեպտեմբեր 18ին, կանոնաւոր անցագիր ունեցող երեսունըջորս հայեր հոս հասան Ալեքսանդրիայէն : Սակայն, զանոնք բերող ոռու շոգեմաւը ճարտանէլի մէջ հրաման ստացած ըլլալով ուրիշ ճամբէ երթալու, կը ասիպուի այդ հայերը օսմանեան շոգեմաւը փոխադրել, որ երբ Պոլս հասաւ, Սուլթանին մէկ թիկնապահը պաշտօնական ոստիկաններու ու գաղտնի ոստիկաններու հետ գնաց հրելով հրմշակելով դուրս հանեց այդ հայերը, որոնք ոստիկանատուն փոխադրուեցան : Յայտնի լէ թէ ի՞նչ եղան այդ խեղճերը :



զարգացած միտք մը, որոնցք ինչպէս բոլոր անդրանիկ, անկեղծ սիրոյ հուրքին տակ արթնցողները — ամուսնանալ Սաթենիկի հետ :

Ամուսնանալ... սիրային արքշիւղութեան վարդապետ կը սթափէր յանկարծ դասն երջանկութեան մէջ : Ամուսնանալ, միայն իր սիրած, պաշտած Սաթենիկին հետ, բայց ի՞նչպէս :

Ինք որ իր անձը ապրեցնելու ոչ մէկ միջոց ունէր, ինչպէս պիտի համարձակէր ուրիշի մը հոգն ալ ստանձնել, ինք որ իր այդ անգործութեան և անյուսութեան օրերուն մէջ, զըրկանքներով լեցուն ցանցի մը մէջ բանտարկուած կը թապալկէր, իրաւունք ունէր միթէ ուրիշի մը ապագան ալ կապելու իրենին հետ :

Վարդապետ սկսաւ լուրջ կերպով անդրադառնալ իր վիճակին վրայ : Ողբել իր մէջ ծխածակուող այդ անդրանիկ սիրոյն բողբոջները ու թողուլ հետանալ Սաթենիկը չէր կըր-

նար. իր երիտասարդական թարմ, աւելնող զգացումը քանի կերթար կը ծովանար իր մէջը, եւ Սաթենիկի վրայ ունեցած ազգապատանքը, պաշտամունքը օրէ օր անհամեմատ չափերով կը բազմապատուէր :

Ու առաջին անգամ ըլլալով դրամին անհրաժեշտութիւնը, եւ անոր ամենազօր կարողութիւնը զգաց :

Ինչպէս կրնար տրոհօք ինք ալ կարճ ժամանակի մը մէջ կոկիկ գուժարի մը տիրանալ, կարելի չէ՞ր որ յանկարծ գանձ մը գտնէր, եւ կամ վիճակահանութեան մը առաջին պարգիւր չաչէր : Բայց Վառնայի սալալատակները չիս ու քար միայն կը պարունակէին, եւ ինք աւելորդ տասնոց մը անգամ չունէր վիճակահանութեան տոմսակի մը տալու :

Բայց Սաթենիկի տիրանալու համար պէտք էր անպատճառ գործ մը ընէր, եւ ասոր համար նախ սրոնց անոր ծնողացը դիմել, եւ անոնց համաձայնութիւնը առնել, եւ օր մը Ա-

ղանի հանրմին գնաց և Սաթենիկի ձեռքը խնդրեց :

Աղանի հանրմ յանկարծակի չեկաւ, ինք արդէն ինչպէս ըսած ենք զաւկի մը պէս կը սրբէր Վարդապետ, եւ շատ հաւանած էր այդ կարգացող տղուն վարք ու բարքին, եւ դարձեալ իր վիճակին գիտակից խելացի կին մը ըլլալով հետո էր իր Սաթենիկի համար ոսկեղջ ապագայ մը սպասելէ, եւ Ոսկիան ալայի հետ կարճ խորհրդակցութենէ մը ետքը որոնցին Սաթենիկը տալ Վարդապետի : Վարդապետ և Սաթենիկի նշանախօսութիւնը կատարուեցաւ առանց ձեւակերպութեան, բոլորովին իրենց մէջ :

Վարդապետ գոտեպնդուած նոր կորովով մը զինուած նորէն իջաւ հրապարակ : Ալ սկսաւ շարունակաբար գրել Արչալուրթիւն թերթին, եւ քիչ ժամանակէն պզտիկ գրական համար մը շինել իրեն. տեսաւ որ քանի մը երիտասարդներ թատերական փորձեր

կընեն, գնաց միանալու անոնց հետ, ինքն ալ դերասան եղաւ ցնոր տնօրինութիւն թէեւ գրական աշխատութեանը փոխարէն վարձք մը չէր ընդունել, եւ դերասանութենէն ալ շատ ոչինչ բան մը կընդունէր, բայց հիմա յուսալից էր, եւ այն հաւատքը ունէր թէ քիչ ժամանակէն ուրիշ աւելի արդիւնաւոր գործ մը պիտի կրնար գտնել :

Այդ օրերուն էր որ Վարդապետ գրեց ժամանակակից կեանքէ թատերգութեան մը եւ զոր ներկայացուց ի նպաստ իրեն, ինչպէս տեսանք պատմութեանս սկիզբը :

ՎԱՋԱՆ ՄԱՆՈՒԷԼԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պայազիտի տեղապահ Մամբրէ վարդապետին կողմէն գրութիւն մը հասած է Պատրիարքարան, որով տեղեկութիւն կուտայ Արշակերտի ազգայնոց այլասեռման և ապականելու բարքերու, և դէպի կրթական գործը իրենց ցոյց տուած անարբերութեան մասին: Տեղապահ Հայր-Սուրբը կիմացնէ թէ ներսէս անուն քահանայ մը և իր համախոհները վանք ու դպրոց իրենց «կէտիկ» բրածամէն հասոյթ կը կողոպտեն ու ազգային կարուածները կը փճացնեն: Այս քահանային օրինակէն քաջալերուած են եղբոր վանքին միւս միաբաններն ալ:

— Մարաշի Արսէն քահանան շրջակայ գիւղերը այցելելով անոնց մասին տեղեկագիրք մը զրկեր է պատրիարքարան, ուր այդ կողմերը դպրոցէ և քահանայէ բոլորովին զուրկ մնացած ըլլալը կը յայտնէ, և կը խնդրէ որ վարժարանները բանալու համար նպաստ զըրկուին: Բողոքական պատուելիները (գրողը ասանի էլիսնին) ատ տեղերն ալ իրենց պիղծ կնճիթը խոթեր են. և շարունակ նորանոր ժողովարաններ ու դպրոցներ կը բանան տեղւոյն ժողովուրդը որսալու համար:

— Պուրսայի առաջնորդ, Տէր Յովհաննէս եպիսկոպոս Արշարունի, որ ժամանակէ մը ի վեր հիւանդութիւնը դարմանելու համար Պոլիս կը գտնուէր, ո՞վ գիտէ ո՞ր սխրագործութեան համար, Սուլթանին կողմէ երրորդ աստիճանի Մէծիտիէի պատուանշան ստացեր է:

— Սեբաստիոյ ազգայինները կը գանգատին տեղւոյն կրօնական ժողովին անդամներէն կրօնիտէս քահանայէն և անոր հեռացումը կը խնդրեն, յայտնելով որ, եթէ անոր շահատակութեանց վերջ մը չի տրուի պատրիարքարանին կողմէն, որոշած են լատինականութիւնը ընդունիլ:

— Ստացած ենք «Հանդէս» ընկերավարական հանդէսին երկրորդ թիւը, որուն կցուած է «Հանդէս»ը հրատարակող խմբին կողմէ Բարիզի ընկերավարական միջազգային համաժողովին ուղղուած տեղեկագրին պատճէնը ֆրանսերէն լեզուով:

Շատ կը ցանկայինք որ այս նոր հանդէսը իսկապէս գիտական հոգի վրայ տրուէր, Գիտական սօցիալիզմի հաստատուն և դրական գաղափարները անհրաժեշտ է մեր ժողովրդի մէջ տարածել. վերջապէս ժամանակ է հասկնալ թէ սօցիալիզմը այնպիսի ձեւով պէտք է քարոզել որ ծաղրի նիւթ չի դառնայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պոլսոյ մէջ ձերբակալուած Ա. իրքսան Արզուեանին հետ բռնուած հայերու թիւը մընչեւ 300ի հասած է: Ձերբակալուածներուն մէջ նախ կը գտնուէր նաեւ Առաքել Կարապետեան, Ռուսահայտակ հայը որ մէկ քանի շաբաթ առաջ գաղտնի Պոլիս եկած էր, բայց ուստիոյ գեսպանը ազատած է զայն: Կարապետեան այժմ պահուած է Կերայի բուսական հիւպատոսարանը և իր հարցաքննութեանց մէջ խստիւ բողոքած է յեղափոխական նպատակաւ Պոլիս եկած ըլլալու մասին իր վրայ ծանրացած ամբաստանութեան դէմ: Այլ տաճիկ կառավարութիւնը և ոչ ալ բուս հիւպատոսարանը չեն կարողացած ունենալ վտանգաւոր առարկայ կամ գործիքներ երեւան հանել իր քովէն կամ բնակավայրէն, բացի նշանակութեանէ զուրկ նամակէ մը:

— Բ. Դուրբ իբր պատասխան Ռուսիոյ դեսպանին էրզրումի հիւպատոսի խնդրին համար տուած ծանուցագրին յայտնեց թէ կայս. կառավարութիւնը Ռուսիոյ պէտք եղած գոհացումը տալու համար ամէն ինչ կատարած է: Էրզրումէ հասած լուրերուն համեմատ Երզնկա զրկուած զօրքերը յայտնած են քիւրտերուն ձեռքէն ազատել գողցուած ձիերը և հիւպատոսին թուղթերը:

— Բարիզի տաճկական դեսպան Միւնիթի պէյ հրահանգ ստացած է Պոլսէն միջամտել Մատրիտի թրքական դեսպան Իզզէտ Թուատի յարուցած խնդրոյն՝ կարգադրութեան և համաձայնութեան մը յանգելու համար: Թուատ փաշա այժմ Բարիզ կը գտնուի այդ առթիւ:

— Սուլթանին հրամանով նախարարաց խորհուրդը կրկին իր ուսումնասիրութեանց առարկայ ըրած է մաքսային հարցի թերաշխարհութեամբ վոխառութիւն մը կնքելու խնդիրը, որուն հետեւանքով 30 միլիոն ֆրանքի գումար մը պիտի մտնէ գանձուն մէջ:

— Սուլթանը վաւերացուցած է Ապտուլլահ Հիւսէին անուն արարացւոյն գլխատման իրատէն: Աս արարացին Սուլթանին յոբելանանին տօներէն քանի մը օր առաջ Սանտի կառավարչատունը օգը հանել փորձած էր:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Բոլոր կառավարութիւնները նպաստաւոր պատասխան տուած են ֆրանսական կառավարութեան ուղղած ծանուցագրին, որուն ուժ տուած էր նաեւ Ռուս

սիա: Միայն ճարտն դեռ իր վերջնական կարծիքը յայտնել կը յապաղի, բայց կը յուսացուի որ ան ալ նպաստաւոր պատասխան մը պիտի տայ:

— Չինական յայրաքաղաքին Սինկանֆու փոխադրուիլը մեծապէս պիտի զժուարացնէ բանակցութեանց շարունակութիւնը: Կրտուի թէ թագուհին հիւանդ է, և նոյնիսկ մեռած:

— Կրտուի թէ Անգլիական կառավարութիւնն ալ Գերմանական առաջարկին նպաստաւոր պատասխան տուած է: «Սթանտարտ» ցաւ կը յայտնէ թէ Միացեալ Նահանգները այնքան դժուարութիւններ կը յարուցանէ այս առաջարկութեանց դէմ: Իր կարծիքով Թագուի ամբողջութեանց քանդումը բանակցութեանց ըսկըտուելուն անհրաժեշտ պայման մը նկատել կամ չի նկատելու խնդիրը, պէտք չէ պետութիւններուն անջատման պատճառ մը դառնայ: Մ. Նահանգները նմանապէս վերապահութիւն ցոյց կուտան Բէքիւի մօտակայ գաւառները մշտնջենապէս գրաւելու կէտին մէջ, ինչպէս նաեւ ռազմամթերքի և զէնքի մուտքը արգիլելու համար:

Քիչ առնենք բոլոր զօրագունները Բէքիւնէն հեռացած պիտի ըլլան բացի հետեւակներու ջուրհասէ մը:

— Վալտերը ֆէլիքսի մէջ ընդհանուր զօրաց հրամանատարութիւնը ստանձնած պահուն սախոսքերը արտասանած է. «Հպարտ և ուրախ կը զգամք զիս իսկարգուած ըլլալու համար անանկ զօրագունտի մը՝ որ արդէն հերոսութեան ու քաջութեան փայլուն ապացոյցներ տուած է: Իրանցնէ մեծ գոռարութիւններ ինծի կը ոպասեն, բայց ես այն հաստատ համոզումն ունիմ թէ, իսկոյն պիտի հասնիմ նպատակիս այսքան փորձառու զօրագունտի մը օգնութեամբ, որ այսօր միակ առաջնորդի մը հրամաններուն տակ կը միանայ»:

— Կայսերական հրովարտակ մը չինական ապստամբներու գաղտնաբերումը կը յայտնէ: Դատարարութեաններուն մէջ կան նաեւ բարձրաստիճանի պաշտօնեաներ, Թուան իշխանը Գալկարիա աքսորուած է, իշխան Եիկ և Հերձակ-Չայլու՝ մշտնջենական բանտարկութեան դատապարտուած են:

Ն Ա Ս Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Ռուսիա. — Վերջերս 15 ֆրանքնոց մանտաթ մը ընդունեցանք որուն որմէ ըլլալը չենք գիտեր, ով որ է զրկողը խնդրենք թող տեղեկացնէ խմբագրութեանս:

—)(—

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, Թ. Կ ՊՕԵՆՈՒԲԵԱՆԻ

Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 ֆրանք, Գ. Տարի 1 ֆրանք, Գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ:
Վճարումները կանխիկ, Յանձնարարութեանց համար գիտել յօրինողին սա հասցէով:
Թ. Կ. ՊՕԵՆՈՒԲԵԱՆ (Պուլկարիա) Վաննա

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վէստէլլո» հայ գերասանական խմբին կողմանէ պիտի ներկայացուի վաղը գիշեր ժամը 9ին, «Ոճրագործին վերջին ժամը» կատակերգութիւն 3 արար:

Վաղը գիշեր Պ. Ճիվանի խմբին կողմանէ պիտի ներկայացուի «Գիւղացիին աղջիկը» եղերերգութիւն 3 արար:

Երգ և պար Տիկին Լիզայի և Օր. Գաթինայի կողմանէ:
Ս. Գրոպաթ՝ Օր. Գաթինայի կողմանէ:

ԳԻՆԵՐԸ ԱՍՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարգաւոր յանձնարարութեամբ, որ զպրոցական նոր շրջանին համար, ծանօթ հեղինակներէ, մանկավարժական լուրովին նոր գրութիւններով պատրաստուած զպրոցական գրքեր բերել տուած եմ: Մեծաքանակ գնուելու գոհացուցիչ զեղչ, Ունէ յանձնարարութիւն անցումագրելի և անպատասխան կը մնայ եթէ կանխիկ գրամով ապսպրուած չըլլայ:

Գրատանս հետ հաշիւ ունեցողներէ կը խնդրուի որ փութեամբ ժամ առաջ կարգադրել:

Գնում եւ վաճառում ամէն տեսակ նամակագրութիւններու:
Լոյս տեսաւ Գերական-Ընթերցարան պատկերազարդ նախակրթարան Ա. տարի գրել կարգալու բնական գրութեամբ, աշխատասիրեց Միթար Պոնտագի, գին 5 դահեկան:
Հասցէ՝ A. Zarbhanlian Librairie Varna (Bulgarie)

ՉՈՒՄԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆՊԵՐԿ» (Տպագրական տառերու)

Կարծր մետաղ - Ոռդիկ կարգ Հաշտասար քարձրոքիւն
Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գներով:
Հասցէ՝
Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Ignatieff № 3, 13-25

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

Պատկերագրող քնաշխարհիկ քառասուն Այս հոյակապ գործին Բ. պրակն ալ հրատարակուած է:
Ա. պրակ զարդարուած 80 պատկերներով:
Բ. պրակ զարդարուած 91 պատկերներով:
Իւրաքանչիւր պրակ ճամբու ծախսով կարժէ 3 ֆրանք:
Հասցէ՝
Imprimerie Armenienne St. Lazare (Italie) Venise

Печатница Хр. Н. Войниковъ—Варна.